



Կալիֆորնիայի պաշտպանության և քարոզչության համակարգ
www.disabilityrightsca.org
Անվճար՝ (800) 776-5746
Հեռատիպ՝ (800) 719-5798

Disability Rights California
PAIMI Բողոքարկման երաշխիքի ընթացակարգ
(PAIMI Assurance Grievance Procedure)

Դաշնային օրենսդրությունը պահանջում է, որպեսզի Disability Rights California-ն բողոքարկման ընթացակարգ սահմանի այն անհատների համար, ովքեր օգտվում են հոգեկան առողջության ծառայություններից, ինչպես նաև հոգեկան հիվանդություններ ունեցող անհատների ընտանիքի անդամների, կամ այդպիսի անհատների կամ նրանց ընտանիքի անդամների ներկայացուցիչների համար՝ երաշխավորելու, որ Disability Rights California-ն գործում է Միացյալ Նահանգների Օրենսգրքի՝ Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց պաշտպանության և նրանց իրավունքների քարոզչության 42-րդ հոդվածի § 10805(a)(9)-ի համաձայն (Protection and Advocacy for Mentally Ill Individuals Act. 42 U.S.C.):

Որևէ անհատ, ով կարծում է, որ Disability Rights California-ն խախտել է ստորև ներկայացվող դաշնային երաշխիքներից որևէ մեկը, իրավասու է բողոք ներկայացնել Բողոքարկման Երաշխիքի Ընթացակարգի (Assurance Grievance Procedure) համաձայն -, եթե տվյալ անհատը նաև՝

1. Անձ է, ով օգտվում կամ օգտվել է հոգեկան առողջության ծառայություններից,
2. Հոգեկան առողջության ծառայություններից օգտվող կամ նախկինում օգտված անձի ընտանիքի անդամ է, կամ
3. Հոգեկան առողջության ծառայություններից օգտվող կամ նախկինում օգտված անձի ներկայացուցիչն է :

Դաշնային երաշխիքները պահանջում են, որ Disability Rights California-ն պետք է՝

1. Ծառայություն տրամադրողներից անկախ լինի,
2. Իրավունքները պաշտպանելու և քարոզելու կարողություն ունենա,
3. Վերապատրաստված անձնակազմ ունենա,
4. Չարաշահման և անտեսման վերաբերյալ պնդումները հետաքննելու իրավասություն ունենա ,
5. Իրավասու լինի հետամուտ լինելու իրավական, վարչական կամ այլ համապատասխան դատական պաշտպանության միջոցների,
6. Կապ ունենա հաճախորդների հետ, ինչպես նաև փաստաթղթերը և ծառայությունները ստանալու/օգտագործելու հնարավորություն ունենա ,
7. Պահպանի տեղեկատվության գաղտնիությունը,
8. Հաճախորդների անունից քայլեր չձեռնարկի , որոնք կրկնօրինակում են հաճախորդի օրինական խնամակալի, պաշտպանի կամ ներկայացուցչի կողմից արված գործողությունները, բացառությամբ Նահանգի կողմից արված, և այն դեպքի, եթե այդպիսի իրավական ներկայացուցիչները հայցում են Disability Rights California-ի օգնությունը,
9. Մինչև իրավական գործողություն կատարելը կիրառի բոլոր հնարավոր վարչական պաշտպանության միջոցները՝ բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի,
10. Ունենա բազմանդամ կառավարող խորհուրդ, որը միացյալ ուժերով մշակում է առաջնահերթություններ, և ներառում է անդամներ, ովքեր լայնորեն ներկայացնում են Disability Rights California հաճախորդներին և խորհրդատվական խորհրդի նախագահին ,
11. Ունենա խորհրդակցական խորհուրդ, որը քաղաքականության և առաջնահերթությունների վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրում: Խորհրդի անդամների 60% -ը շահառու-ստացողներ են, նախկին շահառու-ստացողներ, կամ ընտանիքի անդամներ: Խորհուրդը նաև լրացնում է Տարեկան Հաշվետվության իրեն վերաբերող բաժինը,
12. Հանրությանը հնարավորություն ընձեռնի մեկնաբանել առաջնահերթությունները,
13. Օգտագործի դատարանի եզրակացությունները դաշնային օրենքների նպատակները իրականացնելու համար, ինչպես նաև

14. Օգտագործի դաշնային հատկացումները լրացնելու, այլ ոչ թե փոխարինելու ոչ-դաշնային դրամական միջոցները :

Որևէ անհատ, ով կարծում է, որ Disability Rights California-ն խախտել է երաշխիքներից որևէ մեկը, կարող է գրավոր բողոք ներկայացնել Գործադիր տնօրենին՝ (Executive Director) կիրառելով Disability Rights California-ի Բողոքարկման Երաշխիքի (Assurance Grievance) ձևը: Բողոքի ձևը պետք է ուղարկվի հետևյալ հասցեով՝

Executive Director

Disability Rights California
100 Howe Avenue, Suite 185 North
Sacramento, CA 95825

Գործադիր տնօրենը կարող է խնդրել Դատավարությունների Բաժնի Տնօրենին (Director of Litigation) կամ Disability Rights California-ի մեկ այլ աշխատակցի ըստ իրադրության իրականացնել բողոքի իրավաբանական վերլուծություն: Գործադիր տնօրենը բողոքարկման երաշխիքի վերաբերյալ գրավոր որոշում կպատրաստի ԲՈՂՈՔԸ ՄՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 30 ՕՐՎԱ ընթացքում:

**PAIMI ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ձևաթուղթ
(PAIMI Assurance Grievance Form)**

Ձեր անունը՝

Ձեր հասցեն՝

Ձեր ցերեկային հեռախոսահամարը՝ ()

Ձեր էլ.փոստի հասցեն՝

Ես [նշեք համապատասխան կետը]՝՝

Անձ եմ, ով օգտվում է կամ օգտվել է հոգեկան առողջության
ծառայություններից:

Հոգեկան առողջության ծառայություններից օգտվող կամ նախկինում
օգտված անձի ընտանիքի անդամ եմ:

Հոգեկան առողջության ծառայություններից օգտվող կամ նախկինում
օգտված անձի կամ նրա ընտանիքի անդամի ներկայացուցիչն եմ:

Կարծում եմ, որ Disability Rights California-ն խախտել է հետևյալ երաշխիքները,
որոնք պահանջվում են Միացյալ Նահանգների Օրենսգրքի՝ Հոգեկան
հիվանդություն ունեցող անձանց պաշտպանության և նրանց իրավունքների
քարոզչության 42-րդ հոդվածի § 10805(a)(9)-ի համաձայն (Protection and
Advocacy for Individuals with Mental Illness Act, 42 U.S.C. Sec. 10805(a)(9) :

Իմ կարծիքը հիմնվում է հետևյալ պատճառների վրա՝

Ամսաթիվ

Անձ՝

Ստորագրություն

Լրացված ձևն ուղարկեք հետևյալ փոստային հասցեով՝

Executive Director
Disability Rights California
100 Howe Ave., Suite 185N
Sacramento, CA 95824
Ֆաքս՝ (916) 488-9962
Էլ.փոստ՝ executivedirector@disabilityrightsca.org